ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2025 թվականի №---Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի №146-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի մայիսի 3-ի №146-Ա որոշման 2-րդ կետով հաստատված՝ «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված ռադիոհաճախականություն-ների հատվածների օգտագործման թույլտվության (այսուհետ՝ Թույլտվություն) պայմանների 4-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերությանը պարտավորեցվել է թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից 2 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հետ նախապես համաձայնեցված բնակավայրերում՝ կանոնադրական կապիտալում ներդրում կատարելու միջոցով առնվազն 500 միլիոն դրամի կապիտալ ներդրումների իրականացմամբ զարգացնել կապի ենթակառուցվածքները և սույն ենթակետով սահմանված պարտավորության կատարումը Հանձնաժողովը գնահատում է Նախարարության համապատասխան տեղեկատվության և Հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված՝ անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացության արդյունքների հաշվառմամբ,

բ) Ընկերությունը 2025 թվականի փետրվարի 14-ի №MH/L250103/1.0/AA գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ խնդրելով երկարաձգել վերը նշված պարտավորության կատարման ժամկետը՝ մինչև 2026 թվականի տարեվերջ, որպես Թույլտվության պայմանների 4-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետում տվյալ

պարտավորության կատարումն անիրատեսական լինելու գործոն նշելով պարտավորության կատարման շրջանակում Նախարարության հետ համապատասխան բնակավայրերի ցանկի և աշխատանքների իրականացման համաձայնեցման գործընթացների ժամանակատարությունը, որոնցով պայմանավորված ներկայացրել է նաև տվյալ պարտավորության կատարման ապահովման համար անհրաժեշտ աշխատանքների ժամանակացույց,

գ) Հանձնաժողովը 2025 թվականի փետրվարի 17-ի №ՄՄ/34.2-Մ2-9/666-2025 գրությամբ դիմել է Նախարարություն՝ Թույլտվության պայմանների 4-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պարտավորության կատարման անհնարինությունը Ընկերության կողմից նշված օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված լինելու և Ընկերության գործողությունների հետևանք չլինելու, ինչպես նաև այդ կապակցությամբ տվյալ պարտավորության կատարման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Նախարարության դիրքորոշումն ստանալու նպատակով,

դ) Նախարարությունը 2025 թվականի մարտի 10-ի №ՊՆ/510/2751-2025 գրությամբ նշել է, որ Նախարարությունն ուսումնասիրել և քննարկել է Հանձնաժողովի գրությունը՝ Թույլտվություն ուժի մեջ մտնելու պահից 2 տարվա ընթացքում Նախարարության հետ նախապես համաձայնեցված բնակավայրերում Ընկերության կապի ենթակառուցվածքները զարգացնելու վերաբերյալ, որի ամբողջական կատարումն օբյեկտիվ պատճառներով նշված ժամկետում անիրատեսական է, նշել, որ հաշվի առնելով աշխատանքների ծավալը, շինարարական թույլտվությունների համար և հողատարածքների ձեռքբերումների ու հողի նշանակության փոփոխության անհրաժեշտ ժամանակահատվածները, ինչպես նաև բջջային կապի ծածկույթ ապահովելու համար տեղանքի բարդ, դժվար հասանելի և վատ եղանակային պայմանները՝ սահմանված ժամկետներում աշխատանքների իրականացումը հնարավոր չէ: Նկատի առնելով վերոնշյալը՝ Նախարարությունը չի առարկել նշված պարտավորության կատարման ժամկետի երկարաձգմանը՝ առանց որևէ հետևանքի,

ե) Թույլտվության պայմանների 4-րդ կետի 4-րդ ենթակետի կատարման մասով Ընկերության և Նախարարության դիրքորոշումների արդյունքներով հաստատվել է տվյալ ենթակետով սահմանված պարտավորության կատարման անհնարինությունը Ընկերության կողմից նշված օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված լինելու և Ընկերության գործողությունների հետևանք չլինելու հանգամանքը,

Հանձնաժողովը նպատակահարմար է համարում նշված ենթակետի կատարման ժամկետը երկարաձգել Ընկերության կողմից հայցվող ժամկետով, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանժնաժողովի 2023 թվականի մայիսի 3-ի «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №146-Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետում «Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից 2 տարվա ընթացքում» բառերը փոխարինել «մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից եռամսյակային պարբերականությամբ՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 5-ը, Հանձնաժողով ներկայացնել Թույլտվության պայմանների 4-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պարտավորության կատարման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- --------- 2025թ.